

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՀԱՅՐԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ՝
ՈՒՂՂՎԱԾ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՒԹՅԱՆԸ**

Նորին Սուրբ Օծությունն իր վերադարձից երկու օր անց գնահատության հեռակալ խոսքը հղեց ԱՄՆ-ի հայությանը՝ Ամերիկայի Հայոց Առաջնորդական Թեմի Հաստատման 100-ամյակի տոնակատարությունները բարձրորեն կազմակերպելու և նշելու համար։

«ՀԱՐԻԻՐԱՄԵԱԿԷՆ ԵՏՔ...

IN THE AFTERMATH OF THE CENTENNIAL CELEBRATION

Մայիս ամսուան ընթացքին գերագույն երջանկությունը ունեցանք Ամերիկահայոց Արևելեան Թեմի հրաւերով այցելելու Նիւ Եորք, Պոստոն և Ուստր քաղաքները նախագահելու համար Ամերիկահայոց Թեմի հաստատման հարիւրամեակի հանդիսութեանց։

Փառք և գոհութիւն կ'ընծայենք Աստուծոյ որ շնորհ ըրաւ Մեզի Մեր պարտաւորութիւնները մեծաւ մասամբ կատարելու։ Յաւօք սրտի, առողջական պատճառներով և բժիշկներու թելադրութեամբ հարկադրուեցանք վեղչել որոշ ձեռնարկներ և մասնաւոր պարտաւորուել ջնջել Ամերիկահայոց Արևմտեան Թեմին և Գանատայի Հայոց Թեմին Մեր ծրագրեալ այցելութիւնները։

Չորս ամիսներ Նիւ Եորքի մէջ բժշկական քննութեանց և դարմանումի ենթարկուելէ ետք, ահա վերադարձանք ի Մայր Աթոռ Ս. Էջմիածին, ուրկէ Մեր շնորհակալութեան ու գնահատանքի խօսքը ուղղելէ ետք Մեր բժշկական խնամատարութեան առիթով, սրտի պարտք համարեցինք Մեր այս յորդորական խօսքը ուղղել Արևելեան Թեմի Սոաջնորդ Սրբապանին, և հոգևորականաց դասուն, Թեմական Ժողովին, բոլոր ծուխերուն և յատկապէս անոնց որոնք մասնակից եղան հարիւրամեակի հանդիսութեանց։

Ի՞նչ մնաց, և ի՞նչ պիտի մնայ, 100-ամեակի տօնակատարութեան այս խանդակից օրերէն։ Հանդիսութիւններու մանրամասնութիւնները ձեզի ծանօթ են գլխաւորապէս մամուլի մէջէն։ Բոլոր անոնք որոնք անձամբ մասնակցելու և ներկայ գտնուելու բախտաւոր առիթը ունեցան վառ յիշատակներ կը պահեն այդ բոլորէն։ Բայց ահա երեք ամիսներ անցան և դեռ ուրիշ ամիսներ ալ պիտի անցնին։

Ի՞նչ պիտի մնայ այդ բոլորէն։ Պարզապէս ծովու ալիքներու նման ապրումներու մակընթացութիւն մը, որուն առհասարակ կը յաջորդէ տեղատուութիւն նիւթեղէն բնութեան օրէնքին համաձայն։ Յիշատակներ, որոնք ժամանակի հետ իրենց գոյնի վառ կենդանութենէն կը պարպուին, կը տծգունին, օր մըն ալ անհետանալու համար։

Ինչպես բազում առիթներով և հրապարակաւ ըսինք, 100-ամեակի բուն իմաստը, արժէքը և նպատակը մեր Հայց. Սոսքեւական Ս. Եկեղեցւոյ վերակենսաւորումն է, նոր վերածաղկումն ու պտղաւորումը ի խնդիր մեր ժողովուրդի հոգևոր, բարոյական և ազգային վարձագման: Բնականօրէն ազգային Սոսքեւական հրատարակութեանց մէջ դուք առիթ կ'ունենաք կարդալու Մեր արտասանած խօսքերու ամբողջութիւնը, թէ՛ Ս. Վարդան Մայր Տաճարին, թէ՛ Էլլիս Ալլընտի և թէ՛ «Ուղտորթ Ասորիա» հիւրանոցի մէջ կազմակերպուած մեր ճաշկերոյթին (9 Մայիս):

Այստեղ կ'ուզենք միայն ընդգծել հիմնական նշանակութիւն ունեցող կարգ մը երևոյթներ, որոնք վստահաբար առիթ պիտի ըլլան ձեզի համար անձնական անհատական խորհրդածութեան և հաւաքական զրոյցի և հաւանաբար դառնան խթան, մղիչ ոյժ՝ նորանոր ծառայութեանց:



1. Ամենէն գեղեցիկ, իմաստալից և հարուստ բովանդակութիւն ունեցող ձեռնարկներէն մէկը հարիւրամեակի տօնակատարութեանց սկզբին հոգևորականաց ինքնահայեցողական խորհրդածութեան և խորհրդակցութեան եռօրեայ նիստն էր Պրանքսի մէջ (Նիւ Եորք), ուր սքանչելի պատեհութիւնը ունեցանք ի մի համախմբուած տեսնելու Ամերիկայի Արևելեան և Արևմտեան թեմերու և Գանատայի Թեմի հոգևորականները իրենց թեմակալ հոգևոր Սոսքեւականներու գլխաւորութեամբ, որոնց միացած էին նաև Հարաւային Ամերիկայի երեք թեմերու Սոսքեւականները:

Գործնական հայեցակէտով դիտուած՝ խորապէս ճշմարիտ է այն խօսքը թէ Եկեղեցին առհասարակ պարզ հաւատացեալի համար կը տեսնուի, կ'արժնորոյի Եկեղեցական անձերուն մէջէն: Սարկաւազր, քահանան, վարդապետը, եպիսկոպոսը, կաթողիկոսը, իւրաքանչիւրը իր պարտաւորութեանց ծիրին մէջ տեսակ մը հայելին է Եկեղեցիին: Ինչպէ՞ս ապրինք, ինչպէ՞ս աղօթենք, ինչպէ՞ս խօսինք, ինչպէ՞ս գործենք, ինչպէ՞ս վերաբերուինք, որ ժողովուրդը մեր անձերուն մէջէն տեսնէ Զրիստոսի պատկերը, Աւետարանի ուսուցումներուն վաւերականութիւնը, Հայց. Սոսքեւական Եկեղեցւոյ սուրբ աւանդութեան առկայութիւնը և Աստուծոյ և մշակոյթին նուիրման ու ծառայութեան այն ոգին, որ Զրիստոս արտայայտեց ըսելով. «Տանդ (Եկեղեցւոյ) հանդէպ ունեցած նախանձախնդրութիւնս զիս պիտի ուտէ» (ՅՈՎՀ. Բ. 17):

Մենք յաճախ կը քարոզենք ըսելով, յորդորելով, որ ժողովուրդը ապաշխարութեան, ինքնաքննութեան, ինքնաքիւրեղացման միջոցաւ պէտք է փոխուի և անցնի «ի խաւարէ ի լոյս, յապականութենէ յանապականութիւն, յանգիտութենէ ի գիտութիւն ճշմարտութեան իւրոյ», ըստ մեր Ժամագրքի այս խիտ և պերճախօս բառերուն: 100-ամեակը պէտք է ներշնչէ մեզի քաջութիւնը անձա՛մբ կերպարանափոխուելու: Զրիստոսի առաքեալներու և անմիջական առաջին հետևողներու հաւատքի վառ կենդանութիւնը և մինչև ինքնապոռոհութիւն տանող նուիրումի և ծառայութեան անսակարկ ոգին պէտք է

միախառնուի մեր արեան մէջ: Ես երբեք չեմ մոռնար այն խօսքը, որ Երուսաղէմի Հայոց Պատրիարքներէն Թորգոմ Արքեպս. Գուշակեանը ընդարձակ յօդուածաշարք մը (ապա առանձին հատորով հրատարակուած «Բարեկարգութիւն Հայց. Եկեղեցւոյ» խորագրի տակ) գրելէ ետք «Սիոն» ամսագրին մէջ ըսաւ որպէս եզրակացութիւն. «Հայ Եկեղեցւոյ բարեկարգութիւնը կը կայանայ հայ եկեղեցականի բարեկարգութեան մէջ»:

Այս տեսակէտէն՝ Մեզի համար յատուկ ուրախութեան առիթ եղաւ Մեր շատ կարճ այցելութիւնը Ս. Ներսէս Հոգևոր Զեմարան, հոգևորականաց դասուն հետ միասին: Նման դպրեմանքներէն է որ պիտի դուրս գան մեր նոր հոգևորականները: Ոյժ տուէք Ս. ՆԵՐՍԷՍ Աստուածաբանական դպրոցին, ամենէն կարևորը, նիւթական «առաւելութիւն»ներէն շատ աւելի անդին և վեր՝ իմացական ուսումնական նկարագրային և ծառայողական իսկական առաւելութիւններու ձեռքբերումն է ի սպաս Ամերիկահայ մեր ժողովուրդի հոգևոր առողջ սնուցման, մանաւանդ նիւթապաշտութեամբ տիրապետուած կեանքի ներկայ պայմաններուն տակ:

Եկէ՛ք խոնարհական ոգիով առ Աստուած և սիրոյ ու ծառայութեան ոգիով առ հաւատացեալ ժողովուրդն մեր՝ գիտնանք, քաջութիւնը ունենանք 100-ամեակի այս առիթով անձամբ փոխուելու և զգացնելու մեր ժողովուրդին պայծառակերպութեան զօրութեան բարերար ազդեցութիւնը մեր Ս. Եկեղեցւոյ կեանքին մէջ Միացեալ Նահանգներու և Գանատայի այս տարածքին:

2. Մեր հայեցողութեամբ՝ հարիւրամեակը իր բուն նպատակին մէջ ուղղուած է հայ երիտասարդ սերունդին: Մնցեալը փոխել անկարելի է: Ինչ որ եղած է՝ եղած է: Ինչ որ ըլլալիք է՝ ա՛յդ է մեր պարտքը: Մեր հայրերը ըրին ինչ որ կրնային ընել, սպիտակ ու սև կողմերով, գոհացուցիչ կամ անգոհացուցիչ չափերով, կամ լաւ ու վատ եղանակներով: Աստուած է անոնց ըրածներուն դատաւորը: Ինչպէս Պօղոս Առաքեալ կ'ըսէ. «Ինչ որ անցած է՝ կը մոռնամ և կը նայիմ դէպի առաջ» (Փիլիպ. Թ 13):

Մենք կրցանք ներկայ ըլլալ մեր փոքրիկներու մէկ հանդէսին Առաջնորդարանի «Գալուքճեան» սրահին մէջ: Տեսանք անոնց շնորհներուն ծաղկումը դպրոցական-կրթական գործունէութեան ճամբով: Սքանչելի էր անոնց արտայայտած թարմ շունչը: Կը մնայ, որ անոնք այդ շունչով շարունակեն տոկալ և աճիլ իրենց երիտասարդութեան և չափահասութեան տարիքին. մինչև ի խորին ծերութիւն: Որովհետև ոգին ժամանակի ու տեղամիջոց կամ տարածութեան պայմաններէն վեր է:

Դժբախտաբար Մեր անհանգստութեան պատճառաւ կարելի չեղաւ Մեզի համար այնքան ցանկալի հանդիպումը ունեալ մեր երիտասարդ սերունդի ներկայացուցիչներուն հետ: Բայց առիթներ ունեցանք Մեր մտածումներն ու զգացումները և սպասումները արտայայտել այլապէս խօսքերու ընթացքին: A.C.Y.O.A.-ի նման օրինակելի կազմակերպութիւնները պէտք է նոր շունչ, նոր ոյժ քաղեն 100-ամեակի տօնակատարութենէն: Եւ այս պարտաւորութիւնը առաջին հերթին կ'իյնայ երիտասարդութեան վրայ: Դո՛ւք էք, երիտասարդներ և երիտասարդուհիներ,

որ պիտի աշխուժացնէք ձեր կեանքը եկեղեցւոյ մէջ և եկեղեցւոյ շուրջ: Դուրսէն ուրիշները պիտի չգան և ձեր ձեռքերէն բռնեն ու առաքնորդեն: Դուք էք որ պիտի ստանձնէք պարտաւորութիւններ: Կա՞յ աւելի գեղեցիկ մարդկային արարք քան այն երբ մարդ էակը, այդ կամ կին, պատասխանատուութիւնը և ծառայութիւնը կը զգայ որպէս անձնակա՞ն շահագրգռութիւն, անձնական պարտք (personal responsibility and motivation):

Գիտեմ աշխարհիկ կեանքը (secularistic way of life) դարձած է շատ գրաւիչ ներկայ դարուն: Բայց կեանքը աւելին է քան սպառողականութեան ընթացքը (life is more than just a process of consumerism): Հաւատք, գաղափար, իդէալ, տեսիլք, հոգեկան վայելք, մնայուն արժէքով ծառայութիւն – ահա ասոնց նման սկզբունքներով է որ պիտի արժեցնէք ձեր մարդկային և ազգային գոյութիւնը:

Օն յառա՛ջ: Նայեցէք դէպի նոր հորիզոններ: Սնցեալը մի մոռնաք, բայց անցեալով մի գոհանաք: Ի՞նչ կ'ընէք դուք, այդ է էականը: Խօսի՛, դժգոհի՛, քննադատել երիտասարդութեան ամենէն բնորոշ և առողջ յատկանիշները չեն: Գործել, տեսիլք ունենալ, նպատակով շարժիլ, յառաջ գնալ, անցեալին վրայ նոր իրագործում աւելացնել – ահա ասոնք են երիտասարդութեան իսկական նկարագրին գիծերը: Թող 100-ամեակը դառնայ ձեզի համար նոր մարտահրաւէր (challenge):

3. Մենք եղանք Էլլիս Ալլընտ, Նիւ Եորքի և Նիւ Ճըրքիի հպած այն կողմակը, ուրկէ հարիւր հազարաւոր մարդիկ աշխարհի չորս կողմերէն մուտք գործեցին Ամերիկա: Մտնց շարքին հազարաւոր հայեր ժԹ դարուն և անկէ ետք անցան այդ «դուռն»էն և իրենց մայր հողին վրայ կորսնցուցած ապատութիւնը վերագտնելով՝ վերստին իրենց ընտանեկան և համայնքային կեանքը կառուցին այս օրինեալ հողին վրայ:

Ձեզմէ անոնք որոնք հակառակ փոթորկայից մթնոլորտին և տեղատարափ անձրևին ներկայ գտնուեցան այդ ժողովրդական հանդիսութեան, լսեցին Մեր խօսքը, որուն մէջ անցեալի պրկողութեան, ճնշուածութեան, բռնակալութեան, հալածանքի, քարդի, ցեղասպանութեան տխուր պատկերները շարժապատկերի նման արագօրէն յիշատակելէ ետք անդրադարձանք մեր նո՛ր իրականութեան, ազատ ու անկախ Հանրապետութեան ստեղծումին Մայր Հայաստանի մէջ և մեր հոգևոր ծննդավայրի և սննդավայրի աղբիւր՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ազատ և եռանդուն գործունէութեան ծաւալումի և զարգացումի կենսաընթացին:

Այո՛, պէտք է զգանք, որ «նոր ազգ» ենք, «նոր ժողովուրդ», ոչ թէ այն գաղափարով որ նոր աշխարհի կուգանք: Ո՛չ: Դարաւոր կաղնի ենք մենք: Նոր ենք այն իմաստով որ մեր ինքնութեան և արժանապատուութեան տէր դառնալու և սեփական միտքով, սեփական ձեռքերով և միասնական ջանքերով մեր կեանքի ընթացքը մեր հաւատքին, գաղափարական հասկացողութեան և կամքին համաձայն տնօրինելու մշտադիմումն զգայնութիւնը ունինք և անով կը գործենք:

Էլլիս Ալլընտները այլևս թող մնան որպէս պատմական յիշատակ: Այսօր ճանապարհներ պէտք է բացուին դէպի հայրենիք, հաղորդակցութեան և մասնակցութեան, միասնական աշխատանքի շատ աւելի ազդու և բարերար միջոցներ պէտք է ստեղծուին: Այնպէս ենք մտածելու որ օր մը մեր զաւակներն ու թոռներն ու ծոռները կարենան հայրենիքի

և Եկեղեցիի տարեգրութեան մէջ ցոյց տալ մեր անունները, մեր դրոշմը, կնիքը, հետքը, քրտինքը, տաղանդը:

Բոլորդ ալ քաջ գիտէք թէ ի՞նչ դժուարութիւններու ու նեղութիւններու մէջէն կ'անցնի Մայր Հայաստանը այս օրերուն, անկախութեան այս հաստատման և ամրացման փափուկ շրջանին: Հիմա այլևս խօսքի ժամանակը չէ: Թող մեր գործը ըլլայ մեր խօսքը: Ապրեցէ՛ք լաւագոյն պայմաններու տակ, բայց կը խնդրեմ ձեզմէ, ապրեցէ՛ք ոչ շռայլաբար, ալ ժուծկալօրէն, խնայողաբար, ոչ-վրկողաբար: Ապրեցէ՛ք այնպէս որ կարենաք ձեր տաղանդէն ու քրտինքէն բաժին հանել մեզ բոլորս իր թւերուն տակ համագրկող մօրը՝ Հայաստանին, իր նո՛ր դիմագիծով, իր նո՛ր առաքելութեամբ, իր նո՛ր հրամայականով:

4. Ըլլա՛յ Թեմական Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին, ըլլա՛յ «Ռուստոֆ Ասթորիայի» ջբեղ ճաշկերոյթին, ըլլա՛յ Պոստոնի կամ Ռուսրի մէջ Մեր արտասանած հրապարակային խօսքերու ընթացքին քանացինք մեր կարողութեան և ժամանակի ներած սահմաններու մէջ 100-ամեակի առիթով ցոյց տալ թէ 100 տարիներ առաջ երբ խրիմեան Հայրիկ թեմը հաստատեց յատուկ Հայրապետական կոնդակով, Մայր Աթոռ Ս. Էջմիածինը կը գտնուէր Ռուսական Յարական Իշխանութեան ներքն, ապա իյնալու համար 70 տարիներու ճնշման, բռնատիրական կարգերուն տակ խորհրդային Իշխանութեան հակակրօնական, համայնափարական գաղափարախօսութեամբ գործող վարչակարգի տակ:

Այսօր նոր արև է ծագեր Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան վրայ և անոր հոգևոր կեդրոնը՝ Ս. Էջմիածինը ունի բոլոր հնարաւորութիւնները նոր և տենդագին աշխատանքի, հոգիներուն մէջ 70 տարիներու քանդուածը վերականգնելու և քրիստոնէական սուրբ հաւատքի, Աւետարանի մաքուր և ասկուացուցիչ ու երջանկաբեր ուսուցումներու, Հայց. Եկեղեցւոյ աւելի քան 1700 տարիներու հարուստ հոգևոր ժառանգութեան բարիքները մեր ժողովուրդին բաշխելու, որպէս բարոյական տոկուն կոռուան և միանգամայն ներշնչարան նոր իրագործումներու:

Մարդ-ոյժի կարիքն է առաջնահերթը: «Մարդ է որ գործէ վերկիր» ըստ Աստուածաշնչի ուսուցման: Մարդն՝ ալ կ'ապրի երկրի վրայ: Կենաքը երկրաւոր և մարմնեղէն երեսներուն մէջ կարիքն ունի նիւթական միջոցներու: Սիւս թէ ինչո՞ւ համախորհուրդ Ամերիկահայոց Արևելեան Թեմի Թեմական Իշխանութեան հետ, որոշուեցաւ հաստատել ՀԱՐԻԻՐԱՄԵՆԱԿԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ մը (Centennial Endowment Fund), որուն տարեկան եկամուտին կէտը պիտի յատկացուի Մայր Աթոռ Ս. Էջմիածին և միւս կէտը Արևելեան Թեմին, կրօնական-դաստիարակչական նպատակներու իրագործման համար:

Մենք արտի պարտք կը զգանք Մեր այս «ՀԱՅՐԱԿԱՆ ԽՕՍԲ»-ին մէջ գրաւոր կերպով անգամ մը եւ Մեր խորագոյն և ջերմագին շնորհակալութիւնները և բարձրագոյն գնահատանքը յայտնել բոլոր անոնց, որոնք սիրալոծար կամքով մասնակցեցան այդ Հիմնադրամի գոյացման: Շատեր ցարդ առիթ չունեցան: «Հարիրամեակի հիմնադրամ»-ը բաց յայտարարեցինք, որպէսզի անոնք որ կը ցանկան՝ կարենան իրենց ներդրումները կատարել, Ազգային Առաջնորդարանի միջոցաւ (Նիւ Եորք):



Միրելի՛ք, կարևորը կա՛մքն է, հաւատքով ամուր, յոյսով պրկուած և սէրով շարժող: Մնզիացի մեծագոյն գրագէտ Շեքսպիրը ըսեր է. «Մնդ ուր կամք կայ՝ անդ հնարք կայ» (Where there is a will there is a way): Ես ալ կը սիրեմ նոյն ճշմարտութիւնը ըսել ուրիշ բառերով. «Այնտեղ ուր սէր կայ՝ հազար միջոց կայ» (Where there is love there are thousands of ways): Կարևորը սէ՛րն է, կա՛մքը, հաւա՛տքը և մասնակցելու իմաստութիւնն ու քաջութիւնը: Իւրաքանչիւրը իր ձևով և իր յափով: Սովորաբար մարդիկ յաճախ կը տարուին մտածելու որ տուողները առհասարակ մեծահարուստներն են, մասնակցողները՝ տաղանդաւորները: Մինչդեռ ամէն մէկ անձ, տնտեսական ինչ մակարդակի վրայ ալ որ գտնուի, ինչ կարողութեան տէր որ ըլլայ՝ ինքզինք պիտի արժեցնէ ո՛չ իր ունեցածովը, այլ՝ իր տուածովը: Մենք Եւրոպայի մէջ տեսած ենք բազում ազգեր ու մանաւանդ Եկեղեցիներ: Քաղաքացիներն ու անդամները բոլորն ալ կը մասնակցին: Այդ համընդհանուր մասնակցութիւնն է անոնց յաջողութեան կարևոր գաղտնիքներէն մէկը:

Այսօր ով որ ցանկայ, այսինքն՝ սէր ունենայ հանդէպ իր Ս. Եկեղեցիին և անոր պատմականօրէն բաբախող սիրտը հանդիսացող Մայր Աթոռ Ս. Էջմիածնին՝ չի կրնար անտարբեր մնալ իր հոգևոր մօր նկատմամբ:

Սիւս մտեր ենք մեր Եկեղեցւոյ պաշտօնական հիմնադրութեան կամ քրիստոնէական հաւատքի որպէս ազգային կրօն պետականօրէն ճանաչման 1700-ամեակի տօնակատարութեան ընթացքին մէջ: Քանիցս արտայայտուած ենք, որ 1700-ամեակ տօնել՝ չի՝ նշանակեր մէկ երկու շքեղ ձեռնարկներ կազմակերպելով մեր ինքնութիւնը փայփայել և մեր հպարտութիւնը սիրամարգի վերածել...: Այդ տօնակատարութիւնը ինքնագիտակցութեան, ինքնաճանաչման և օտար ազգերու և Եկեղեցիներու կողմէ մեր ինքնութեան ճանաչման, մեր նոր սերունդի դաստիարակութեան հսկայածաւալ շարժումի մը պէտք է վերածուի:

Բայց այս բոլորը կ'ըլլան այն ատեն երբ մենք վերստին արթննանք մեր թմբիւրէն, անտարբերութեան կամ ձեւական ու պարագայական պատկանելիութեան թոյլ զգացումներէն, վերաշխուծանանք և կենսունակ, առողջ մասնակցութեամբ, զոհողութեան յանձնառումով մօտենանք մեր կեանքին և առաքելութեան 100-ամեակի տօնակատարութեան այս օրհնաբեր առիթով:

Ի Մայր Աթոռ Ս. Էջմիածին կ'աղօթենք որ Ամերիկահայոց Արևելեան թեմը ու առհասարակ Միացեալ Նահանգներու Արևմտեան շրջանի և Գանատայի մեր թեմերը, ծխական եկեղեցիները, համայնքային կազմակերպութիւնները և ամբողջ հաւատացեալ ժողովուրդը մտնէ վերածաղկումի նոր շրջանի մը մէջ ի հաղորդութեան և ընդ հովանեաւ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալք շնորհօք Սուրբ Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մենջ. ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

24 Օգոստոս, 1998

ի Մայր Աթոռ Ս. Էջմիածին»: